

# ՊԱՏՄԱԿԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎԱՐՈՒՅ

ՆԵՐՍԻՍԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

ԵՐԳՈՑ ՍԱՂՄՈՍԻՍ ՔՆՆԱԻՂԻ\* )

Ընդ նուազել թագաւորութեան և իշխանութեան Հայոց, յորժամ յափշտակեցաւ յԻմայէլացւոցն Մայրաքաղաքն Ընի, և տարազրեցան թագաւորքն մեր ի դաւառս և յիշխանութիւնս արքայիցն Յունաց, այր ոմն յիշխանացն Հայոց Աղլեարիս անուն՝ որ էր ի տանէն Ասպուրականի, իբրև զմտերիմ և զխոհիմ և զարի ի զործ պատերազմի՝ առաքեցաւ յինքնակալէն Ալէքսէ ի դաւառս Արեւիկեցոց իշխել մայրաքաղաքին Տարսուփի և Մամիստիոյ, որ եկեալ տիրէր սոցա հայրենի կարգաւ և աւրինաւ և մայր ի հաւատարմութեանն Յունաց. և շինեալ տաճարք աղաթից ի լեառնային և ի դաշտային դաւառս՝ որ և բազումք կան ի մջ Յունաց Հայասեռ ազգիս պաշտամամբք: Սա կզիտ ի ստորոտս լերինս Սորոսի (Տորոսի) և ի զլուս քաղաքիս Տարսուփի երկու անմատոյց զրեակս, միոյն անուն Լամբրուն՝ և միւսունմն Պապեռան՝ որք և ունէին շուրջ զինքեամբք զեռաւս և աւանս: Օ Պապեռան իւր սեպհականեաց զանձուց ըշտեմարան՝ և

շինեալ եկեղեցի մեծ՝ դամբարան հանդրատեան սահմանեաց իւր և իւրոցն, և ըզԼամբրանն ետ ի մտերիմ և ի սիրեցեալ իշխանն՝ որ եկեալ էր ընդ իւր յաշխարհէն Հայոց՝ անուն Աւշին, և աւանդեաց ի նա զմասն մեծի և զլսաւորի ( . . . ) առաքելոցն Պետրոսի՝ զոր ունէին Հայք ըստ նախազրեալ պատմութեանն: Աւհրամայեաց հպատակութեամբ սպասաւորեալ յայսմ զղեկի սրբոյ առաքելոյն, և իւր սեփհական ունել զրերզս և զգաւառս, որ եկեալ ազգատոհմաւ իւրով և զտեալ զանառիկս ամայացեալ՝ շինէր ըստ կարի և պատրաստեաց նախ ի ծայր բերդիս հանդստարան սուրբ և զլսաւոր առաքելոյն նշխարաց:

Իսկ Աղլեարսայ վաղձանեալ եղաւ ի Պապեռանն: Աւ տիրեաց Տարսոնի մի յիշխանաց իւրոց փեսայ Աւշին, յորոյ աւուրսն արձակեցաւ ազգն Իմայէլացւոց ի վերայ դաւառիս Արեւիկոյ ի հինգ հարիւր թուականին Հայոց: Աւ զամենայն զաշտային դաւառսն աւերեաց, էառ և զՏարսոն և սրով ճարակեաց զՔրիստոնեայն: Իսկ Աւշինն մնացեալ յանմատչել ամուրս անփորձ՝ և մտերմացեալ Յունաց արքային, առնոյր ի նմանէ անուն պատուոյ և տուրս զանձուց առատապէս:

Յետ սորա վախձանին տիրեաց որդի իւր Հեթում հայրենի աթուոյս, և պատուեցաւ ի Յունաց արքայէն Ալէքսէ Ապապան անուամբ, յորոյ ժամանակն եկն Փռանզն և էառ զսուրբ քաղաքն Արուսաղէմ և զԱնտիոք և զԱրեւիկեցոց քաղաքս ի հինգ հարիւր քառասուն և եւթն թուականին. և յետ ժամանակաց անձուկ (զուցէ անցանելոյ) բազում նեղութիւն

(\*) Ինչպէս այս պատմութենէն եւ յիշատակարանէն կյայտնուի ընթերցողաց, որ Հաղպատու վանուց ընծայեալ « Սաղմոսի մեկնութիւն » հին ձեռագրէն օրինակուած է՝ թէ եւ տեղ տեղ անիմատ եւ սխալ խօսքեր եւ քառեր ստորագծ նն: Ծ. Խ.

կրեաց ի նոցանէ Աերաստաւան շեթում  
 վասն հայրենի բերդիս, և զերծեալ յա-  
 մենայնէ ազնութեամբն Աստուծոյ և սուրբ  
 առաքելոյն Պետրոսի, փարթամացաւ և  
 մեծացաւ աւզնութեամբ թաղաւորին Յու-  
 նաց Յոհաննու: Եւ զի ունէր որդիս վա-  
 յելուչս և դստերս՝ որք կատարեցան հա-  
 սակաւ առաջի իւր, ամուսնացոյց զո-  
 մանս ի նոցանէ: Եւ զաւագ որդին որոյ  
 անուն Աւշին՝ եթող ընդ իւր մնալ ա-  
 ռանց ամուսնութեան: Իսկ Սմբատայ՝ որ  
 յետ նորա ետ զՊապեռուսն, և միոյ ի  
 դստերացն փեսայացոյց զեղբայր Աթու-  
 ղիկոսին շայոց Վրիգորի Մագիստրոսի  
 զԱստիլ՝ որք էին թոռունք Վրիգորայ  
 Մագիստրոսի Բջնեցոյ: Իսկ յետ վաղ-  
 ծանին շեթմոյ պայազատեաց զհայրենի  
 աթոռն հարազատ որդի նորա Աւշին, և  
 պատուեցաւ յարքայէն Մանուէլէ Աբխա-  
 զանուամբ, և փարթամացաւ բա-  
 զում գանձիւք. յորոյ ժամանակն դար-  
 ձեալ տիրեաց Յունաց արքայն Տարսոնի  
 և այլ քաղաքացս Ալիկիոյ: Սմա հարս-  
 նացոյց փեսայն իւր Աստիլ զղուստը եղ-  
 բաւր իւրոյ Օւաւրավար անուն, զանխը-  
 լաբար ի Աթուղիկոսէն յեղբաւրէն իւր  
 վասն խղճին՝ որ կայր վասն խնամութեա-  
 նրն: Եւ լեալ սմա կին ժրագլուխ և պը-  
 սակ առն իւրոյ՝ իբրև զայգի վայելուչ ըզ-  
 նորատունկս զաւակաց ծաղկեցուցանէր  
 շուրջ զհայրենի սեղանովն և մնային  
 յարհնութեանն Աստուծոյ. յորոց ծնաւ  
 յետ անդրանիկ դստերն որդի՝ շեթում  
 անուանեալ՝ ի վեց հարիւր թուականին,  
 և երկրորդն հայրս մեր՝ վասն որոյ բանս է,  
 որոյ ի սանդիաց հասակն պատահեալ ախտ  
 ցաւոց՝ բերաւ ի հաւատարիմ ծնողացն

և ընծայեցաւ ամենաւրհնեալ և միշտ  
 փառաւորեալ Աստուածամանին ի տաճար  
 անուան իւրոյ որ ի վանքս Ալեանայ (ըմ-  
 կեռայ) առ ընթեր բերդիս: Եւ սկսեալ  
 ի դեռաբոյս հասակէն վարժէր յուսումն  
 դպրութեան ըստ յաւժարութեան ծնաւ-  
 զացն ընդ այլ եղբայրս իւր մանաւանդ ի  
 քաջահաւատ մաւրէ իւրմէ զաստիարակ-  
 եալ յամենայն երկիւղ:

Իսկ բարեպաշտ իշխանն Աւշին բեր-  
 եալ ուստերս հինգ և դստերս երիս՝ և  
 համբերեալ պէսպէս փորձանաց վասն առ  
 Յունաց արքայն հաւատարմութեան, լի  
 աւուրբք ի ծերութեան հասակն յաթոռ  
 իւր և ի մէջ եղբարց և զաւակաց աւրհ-  
 նութեամբ փոխեցաւ առ Վրիստոս. և  
 եցոյց անդրանիկ որդոյն շեթմոյ զաւու-  
 թիւն հայրենի աթոռոյն, իսկ նուիրելոյ  
 որդւոյն որ Աստուծոյ՝ կալ ի զլուխ առ  
 յինքնն շինեալ եկեղեցոյ սրբոյ և վանիցս.  
 և տուեալ յԱստուծոյ շնորհ անդրանիկն  
 խոհեմութիւն և իմաստութիւն՝ զնաց առ  
 արքայն Յունաց Մանուէլ, և փարթամ  
 արաք առ զհայրենի պատիւ Աբխա-  
 զանուսն: Իսկ այս որ ի կրաւնաւորականս  
 էր վիճակ՝ յետ դաստիարակելոյ մանկան  
 ուսմամբք, ի վեշտաստն ամ ընթացից  
 հասակին ածաւ յերկիւղազարդ մաւրէն  
 իւրմէ առ Աթուղիկոսն սուրբ Ներսէս,  
 որ յաջորդեալ էր զաթոռ եղբարն Վրի-  
 գորի՝ ամենայն իմաստութեամբ և զի-  
 տութեամբ զարդարեալ. և սա ըստ հա-  
 ւատով հայցուածոց դստեր եղբաւրն իւ-  
 ըրոյ զմանուկն ածեալ առաջի ձեռնագ-  
 րեաց քահանայ ի կրանաւորական ձե,  
 և կոչեաց յանուն իւր Ներսէս. զոր թող-  
 եալ մաւրն առ ոտս նորին ի վարժումն

զնաց յերկրագոլթիւն սուրբ տեղեացն  
Նրուսաղէմի:

Այլ 'Ներսիսի կացեալ ի հայրապետա-  
կան աթոռն փոքր մի աւուրս՝ ի նոր-  
հէ ձեռնադրութեանն դարացեալ հոգ-  
ւով, տնչայր յանգրաղ կեանս միայնու-  
թեան և ընթերցման. և սրբոյ Հայրապե-  
տին ուրախացեալ ընդ յառատ ուսումն  
մանկանն, առաքեաց զնա ի վանորայս ի  
Աին լերինն, յորս շրջելով գործիական  
նիսադութեամբն և տեսողականին կրթու-  
թեամբ յառաջէր և նկրտէր հասանել ի  
ըսումն առաքինութեանն ի սէրն Վրիս-  
տոսի: Աւ յետ ամաց զարձեալ ի հայ-  
րենի աթոռս և փափագանաք ի ծնադէն  
և յեղբարցն, ոչ հաւանեցաւ կալ ի զը-  
լուխ ուխտիս որ աւանդեալ էր նմա ի  
հարէն իւրմէ, այլ ի մէջ լերինս յամա-  
յացեալ տեղիս ընդ հոգևոր դաստիարա-  
կի իւրում Յոհաննու ելեալ մնայր ի  
միայնութեան: Աւ քաղցր էր նմա այն  
քան զամենայն հեշտութիւն: Աւ կոչէր  
անապատն բնակութեան. Աստուածածին  
Սաղրուի, ի հոսանս զետոյն ժեռաիրա և  
մերձ նմին տաճար սրբոյն Վեորգեայ. յո-  
րում անձուկ սենեկին ի զիշերի և ի  
տունջեան անհանգիստ էր յընթերցումն,  
և միայն կատարէր զգործ սուրբ պատա-  
րազին պաշտաման: Իսկ է ՈՒՎՎ թուա-  
կանին փոխեալ առ Վրիստոս Հայրա-  
պետն սուրբ Ներսէս, և յաջորդեալ զԱ-  
թոռն սուրբ նորին եղբար որդին Վրի-  
գորիոս, մակակոչեալն Տղայ, որ և քուեր  
որդի հաւր սորա, ձգէր յինքն զմանուկս  
'Ներսէս հրամանաւ զրոյ, և սա վասն որ  
առ նա անանջրպետ սիրոյ, ևս և վասն  
թերի ունելոյ զվարժումն զրոյ՝ փութա-

ցաւ առ հարազատն իւր Հայրապետն  
սուրբ, և նորին խնամաքն իձեռն վար-  
ժապետաց սրբոյ քննեալ տեղեկացաւ  
Հին և Նոր Ատակարանաց իմաստից. զոր  
քսան և երկոց ամաց ձեռնադրեաց Հայ-  
րապետն Նպիսկոպոս Տարսնի, նոյն և  
Վամբրունիս և շրջաբնակ զաւառացս:  
Աւ առաքեաց առ իւրս պատուով: Իսկ  
սորա եկեալ խուսափէր ի հոփութեան  
զբաղմանց, և ի տնչանս ընթերցման զը-  
րոց նկրտէր, և զի ոչ կարէր ըստ տրու-  
ման իւրոյ ունել զանգրադութիւն, փա-  
խրստական լինէր այսր անդր ի հեռաւոր  
տեղիս. և զի վարժեալ էր ի մանկութեա-  
նն ջանիւք մաւր իւրոյ զհելլէնացի գիրն  
տնչմամբ որ առ նոսին իմաստութեամբն՝  
եմուտ ի կղզին Ալպրոս աղքատապէս  
մնալ անդ ի կատարեալ ուսումն նոցին  
հոետորութեանն: Սակայն ոչ ետ թոյլ  
բաղձանք մաւրն և սէր եղբարցն, յոր-  
ժամ լուան՝ ածին վերստին անտի բըռ-  
նութեամբ: Աւ ծանուցեալ թէ ոչ կարէ  
հեռանալ, ել զարձեալ յառաջին իւր  
յանապատն կոչեցեալն Սաղրու, յորում  
և զանձուկն ունէր սենեակի, և զղաստիա-  
րակ հոգևոր հայրն իւր Յոհաննէս բնա-  
կեալ ի տեղոջն, և անդ հաւաքեալ զա-  
մենայն Աստուածային զիրս՝ արգելաւ ի  
տեղոջն. . . ամաց (զուցէ յամայր)  
ժամանակ: Աւ կայր ընդ մարմնոյ (. . .)  
և բանիւ Աստուծոյ որ քաղցր է ի քիմս  
ճաքողացն քան զմեղը բերանոյ, պաշտէր  
ի տէրունական (. . .) զգոհութիւն  
սրբոյ պատարազին խորհրդոյ, և յայլ ա-  
ւուրս մնայր յառանձնական սենեկն յըն-  
թերցումն և ի զրութիւն և յաղաւթս  
զբաղեալ: Իսկ հոգևոր հայրն իւր և դաս-

տխարակն Յոհաննէս ի նստելն երբեմն առ նմա՝ քննէր զմիտս սաղմոսացն, և ի բուծանելն՝ աղաչէր զրել զնոյն, և թողուլ ի պէտս աւգոսի զինի եկեղոցն: Յայնժամ ըստ կամացն Եստուծոյ և ըստ հնազանդութեան խորհողին սկիզբն արար զրել ըզքննութիւն երգոց սաղմոսին ի շրջանս աւուրց ամաց իւրոց քսան և վեց թուոյ, և թուական ի վեց հարիւր և քսան և եւթանց: Աւ կատարեալ ի քսան և ինն ամն, յետ այսր փութացաւ ի լեառն որ առ ընթեր մեծին Ենտիոքու ի վանորեկայնն որ ի Ատիննացւոցն և ի Հելլենացւոցն պայծառանային անդ աստուածահաճոյ կարգաւք և կրօնիւք: Աւ բնակեալ անդ աւուրսին՝ թարգմանեաց զմեկնութիւն Յայտնութեանն Յովհաննու: Աւ բռնադատեալ դարձեալ ի սիրոյ Հայրապետին սրբոյ Վրիգորի՝ որ կոչէր հրամական (հրամայական) սասախ՝ զնաց առաջն նորա, զոր ողորանաք և ահարկութեամբ հաւանեցուցանէր կալ ի զրուս ժողովոյն որ հաւատացաւ նմին ձեռնադրութեամբ այցելութեանն: Աւ այսպէս զսլացումն մտաց ընդ իւրե նուածեալ հոգեւոր հաւրն, առեաց (առաքեաց) զսա ի նուաստ գձձութենէն յաթոռ իւր պատուով:

Ի սոյն ժամանակի և եղբայր իւր մեծապատիւ Աերաստաւոս Հեթում ամենապատիկ վայելչութեամբ շինեալ էր ըզսաձար աղաւթից ի սուրբ ուխտս, և նկարագրութեամբ պատկերաց զարդարեալ, յորում ընկալեալ զել ել ( . . . ) յանապատէ փեսայն գեղեցկացիալ աստուածային հանձարովն՝ որպէս լուսին, պայծառացեալ զիտութեամբ որպէս զա-

րեզակն, և հիացուցանող վարուք և բանիւք, կացուցին յաջմէ սորա զգշնոյ սրբոյ տաձարիս զարդարեալ և պաճուճեալ և բազմեալ ի Վահանայապետական յաթոռն ի տառնի Եսկուհւոյն, ետ զխաղաղութիւն ժողովոյս, և յարուցեալ կատարեաց զքանչիւ խորհուրդ սրբոյ պատարագին է յիշատակ փրկագործութեանն Վրիտտոսի և է քաւութիւն ժողովրդեանս: Արոյ հազորդեալ տեսութեամբն և ծաշակմամբ, ուրախութեամբ մեծաւ մատուցաք փառս Վրիտտոսի, և յայնմ հետէ բուռն հարեալ ի վշտակցութիւն ժողովոյս՝ բարեկարգութեամբ տնաւրինէր ի հաւրէն իւրմէ աւանդեալ սուրբ ուխտիս: Իջեալ աւր ստ աւրէ (օր ըստ օրէ) ի ժողով քաղաքին Տարսոնի՝ միսիթարէր զնոսին վարդապետական բանիւ: Աւ հանգուցանէր յինքն զամենայն տեսադս և զլսողս, ոչ միայն զոր ի Հայոց ժողովս՝ այլ և Փռանդաց ազգ և զՅունաց, իւրաքանչիւր ազգացն կարգաց և կրանից տեղեակ զոլով, և յընտրութիւնն հաւանեցուցանաղ կամ հաւանեալ: Եսկ յետ ամաց ինչ անցելոց զաւրանայր արեան հարազատ սոցա Ռուբէն, և յինքն նրւածէր յետ մահուանն Մանուկի արքայի զՄամիստայ և զՏարսոն: Աւ ազահութեամբ որպէս Եզայաբ յայզին՝ Ասբովթայ՝ բռնադատէր զայս Եստուածատուր ամրոցս ի սոցանէ: Յորում մնացեալ զամ մի ողջ յարգելանի և կրեալ զնորա թշնամութիւնն, դարձեալ այցելութիւն առնէր Եստուած և ուղղէր սոցա զխաղաղութիւն: Աւ մանուկն Ռուբէն ի զլուս երկրորդ ամին վճարէր մահուամբ: Աւ խնդրէր ի սոցանէ ներուսն թողու-

Թեան մանկական որ առ սոսին սխալմանն: Աւ յաջորդէր զիշխանութիւնն հարազատ եղբայր նորին բարեմիան Աւոն: Աւ կապէր ընդ սոսա անանջբարեա խաղաղութեամբ: որ և ի տաւնս տէրունականս առ իւր տանէր զհայրս մեր: և առ ի սմանէ վարդապետական խրատով և սրբոյ պատարազին նուիրագործութեամբ մխիթարէր հանդերձ բազմութեամբ ժողովոյն: Իսկ զի ի սոյն առուբքս առաւ ըստ մեղաց մերոց սուրբ քաղաքն Արուստղէմ յայլատեօից, և ինքնական շնորհոց որ Ալաւնաց թագաւոր, լուաք թէ յառաջէ յարեւելս ի փրկութիւն սուրբ տեղեացն, խորհուրդ էառ մեծ իշխողս Աւոն՝ զհայրս մեր սուրբ առաքել ընդ յառաջ նորին հրեշտակութեամբ: Աւ վասն այսր մտածութեան զնայր առ սուրբ Հայրապետն Վրիպորիոս ունել զնորին հրամանսն և զկամսն ընդ իւր: և ի նոյն ծանապարհն խորանարեակ ազգն Կամայէլէ յարձակեցան ի վերայ, և ծանապարհակից եղբարս և զկրանաւորս սրով ձորակեցին առ ընթեր քաղաքին Մարաշայ: Աւ զբեռնակիր զրասան յափշտակեցին՝ մնացեալ խնամաւքն Աստուծոյ միայն սա և եպիսկոպոսակից հարազատ իւր Յոհաննէս և վարժապետն Վեորգ: Աւ զի ունէր ընդ իւր զայլ զիրս սրբոյ պատարազին քննութեան և եկեղեցական կարգաց յինքննէ ասացեալ շնորհիւ սուրբ շնորհոյն՝ յափշտակեցաւ յաւազակացն, և շմնաց հաւատարն, տրտմեցաւ յոյժ: Աւ ի դառնալն առ մեղ վերստին՝ զզուշացեալ զի մի և այս մեկնութիւն սաղմոսիս յիրեք շփոթմանէ՝ որ իւրն է զիր՝ պակասեցէ և հաւասարն ոչ մնացէ, յորդորեաց զկրանակից զեղբայր

մեր զՎեորգ սկսանել և զրել: Աւ նա յաժարութեամբ յանձն առաւ պատրաստեաց զնիւթն և սկիզբն արար: Իսկ ապա փութացեալ իշխանական հրամանն՝ զծանապարհն որ առ ինքնականն շնորհոց թաղաւորն Ալանաց, ծանապարհակից էառ ընդ իւր զՎեորգ, և ինձ Մամուելէ նուատի հրամանն ես զսկսեալն ի նմանէ աւարտել: Չոր յաւժարութեամբ յանձն առի և պինդ հաւատով ի փառս Աստուծոյ կատարեցի ի թուիս Աթո: Այս տեք երեք են կործանման սուրբ տեղեացն Արուստղէմի:

Աւ յիջանել հաւրս մեր ի Տարսոն առ ի նաւարկել ի ծանապարհին որ առաջի կայր, և հաս ինքնական յՎիոնիոն: Աւ յես փոքր ինչ առուբք (հասին) զաւրբ նորին ի Տարսոն, և մնաց սոցին յառաջելն:

Իսկ իմ ի զրելոյ զմատեանս ոչ թուլացեալ, քան զի առնուի ի սմանէ զսուսաւորութիւն հոգեոյ, յառնթեր նստելս միայնութեամբ սուրբ ուխտիս, այլ հրաժարեցի . . . և խնամաւքն Վրիստոսի ի վերջն կէտս ժամանեցի. և սպասաւորեցի զկնի եկեղեցոյ մատուցութեամբ զխառնեալ բաժակս Աստուածային խնամից ի հոգեոր մեր հաւրէս զմայրեցուցիչ հոգեոց և մխիթարութիւն բժշկութեան ակտացեալ մարմնոց: Աւ յաւարտումն սորին փոքր ինչ թողի ձեզ զպատմութիւն կենաց սորին ընթացից, զի մի մընացէ տարակոյս յառաջել ժամանակին սորին քննողի ո՞վն, և ո՞ւսան, և զեմբոյն, որպէս և մեք այսաւր ունիմք զբազում հարց մերոց և վարդապետաց Հայոց այս ինքն զՎաւիթ Աերզինեցի, և զՎրիպոր

Նարիկեցի, և զՄովսէս Խորենացի, և զայլս, որոց ի բանիցն պարարտութենէ զուարճանամք, և զխմբոյն կենաց և վարուց փափագելով՝ զիտել ոչ ունիմք և ոչ մի բան վասն երանելեացն պատմութեան: Յաղագս այսր զսորայս մինչ յայսաւր է կենաց իւրոց ժամանակ Ա՛՛՛ ամ, ցուցաք համուռւաւ: Աւ մաղթեմք Վրբիստոսի տալ զոյն մեզ ևս յերկարութեամբ աւուրց ի գլուխ բարի հովուութեամբն և հանձարեղ այցելութեամբն՝ խնամիչ սուրբ ուխտիս և առաջնորդ ժողովոյս:

Աւ զիսն աղքատութիւն զնել սորին աւրհնութեամբ՝ ի դամբարան հանզրտեան ընդ սրբոց խնոց հարցն, որ այժմ հուպ եմ սոցին ծերութեան ալիաւքս հոծեալ: Իսկ եթէ այլ ինչ ի շնորհացն Աստուծոյ պողաբերէ ծառս մեր տնկեալ ի զնացս ջուրց սուրբ զրոց, մանկագունաց աշակերտաց սորին, տացէ Աստուած զաւրութիւն զրչաւ ի տառ զրոց ժողովել, և զընթացս յառաջատուութեան վարուց սորին և զկէտ զկնի եկելոցդ պատմել: Այլ ես աղաչեմ յիսն վաստակ սխալանաց բայից և բառից թերութեան՝ ընթերցողացդ ներումն շնորհել, զի այդչափ զաւրեցի իմովս տկարութեամբ յարմարել և ի վայելին ի դոյն հոգւոյ մխիթարութեամբ՝ ցաւը աղաւթից ձեր կաթեցէ ի զոգ մերոյն հանգստեան, և բեղմնաւորեալ սնուացէ զթաղեալքս յարդանդ երկրի վարնանայնոյ յարութեանն պայծառանալ նորոգմամբ ընդ յառաջ Վրբիստոսի, և Աստուած խաղաղութեան՝ որ ետ մեզ զմխիթարութիւն շնորհաց և յոյս բարեաց շնորհաւքն իւրովք՝ ի սուրբ մատենէ աս-

տի՝ մխիթարեացէ զմիտս ձեր և հաստատեացէ ի յոյսն և ի սէրն Վրբիստոսի, որում փառք յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Ի թուականի Հայոց ՍՊԹ՝ զրեցաւ աստուածախումբ մատենիս աւրինակն ձեռամբ Աամելի նուասա և յետին զրչի՝ հրամանաւ սրբանեալ վարդապետի և արհ եպիսկոպոսիս մերոյ տեառն՝ Աերսիսի: Արոյ վստահացեալ յողորմութիւնն Աստուծոյ և յանհաս գիտութիւնն և յիմաստութիւնն իւր, համարձակեցաւ ի հոգելից սաղմոսիս մեկնութիւն, և մեկնեաց զսա և եթող ՚ յիշատակ իւր և ի վայելումն սրբոյ Ակեղեցւոյ մանկանց այնոցիկ՝ որք ունիցին ականջս ուղիղ լսել զբանս իմաստից սորա, և խնդրել զթողութիւն մեղաց ի Վրբիստոսէ՝ որ է աւրհնեալ յաւիտեան, ամէն:

Յայսմ ժամանակի յաիշտակեցաւ սուրբ քաղաքն Արուսաղէմ ի Յովսէփայ՝ որ տիրէր Ազիպտոսի և Արարիոյ և Վամասիոսի, ի թուիս ՍՊԹ, և շարժեցան հրամանաւ հայրապետին Հռոմայ թագաւորք և իշխանք բազումք, և անթիւ զաւրաւք յարեմտից, և զան կրելով ըզխաջն Վրբիստոսի առ ի փրկել զսուրբ տեղին: Աւ այս ամք երեք յապաղէ կամքն Աստուծոյ զփրկութիւն, և զեղերին տակալին առնթեր Պտղովմիդայ: Վրեցաւ ի նախայիշատակեալ սուրբ ուխտս Ակեռայ առնթեր հայրենատուր ամրոցի տէրանց մերոց Ամբրուսի, յիշխանութեան մեծահանձար և աստուածասէր Աեւաստաւսին Հեթմոյ, և ի վերակացութեան տեառն մերոյ՝ Աերսիսի և եղբարց սոցին Ապիրատի և Շահնշահի, զորս տացէ

Վրիստոս ի հոգևոր և ի մարմնաւոր իշխանութիւնս բազում ժամանակս: Այլ ի փոխելն յաշխարհէս ի պարս սրբոց Հայրապետացն դասեցէ ի ժողով Արքայութեանն իւրոյ ընդ ամենայն սուրբս:

Յիշեցէք բարեաւ զբարի ծնողս սոցին զնախափոխեալն առ Վրիստոս զմեծանունն Աւշին, հանդերձ երէց դստերաւն Մարեմաւ և կրտսեր որդեկաւն Վրիգորիւ՝ զի հանգիցին ի զոհն Աբրահամու, և մխիթարեսցին փառաւքն Վաղարու, և մայր սոցին Շահանգուխտ ամենաբարի և ճրգնազգեսց այժմ կրաւնաւորեալ ի ձեռաց որդոյ իւրոյ սուրբ հաւրս երկու դստերաւք Շուշանաւ, և Տալիթայիւ, որք նորին ձգնող շաւղացն հետեին, զի մխիթարեսցին ի կեանս զաւակաց իւրեանց և եղբարց, և սոքաւք ընդ նախահանգուցեալս փրկեսցին յիշխանութենէ խաւարի, և փոխեսցին յԱրքայութիւն Տեառն մերոյ Յիսուսի Վրիստոսի ի մասն վեճակի սրբոցն, ի լոյսն և յարագուարձ խնդութիւնն ի Վրիստոս Յիսուս ի Տէր մեր:

Ամենապատճառ և սկզբնական էութիւն երանական Արքորդութեանն սրբոյ որ բոլոր գոյիցս է պատճառ, և հանուր էացելոց սկիզբն արմատ և աղբիւր զոլով բարեաց, իբր ամենահարուստ և առաջին բարի, որպէս աստուածաբանէ ծայրագոյնն աստուածաբանից Արդին Արոաման յաստուածաւանդ ասացեալան, «ամենայն ինչ նովաւ եղև, և առանց նորա եղև և ոչ ինչ որ ինչ եղևն»: Այլ յառաջ քան զայս նախաձայնէր ոմն մարգարէ, «որ ինչ բարին է՝ նորա է»: Այլ ի նոյն մտաց զաւրութիւն, համաձայն ի միւսոյ սեանն

կարծելոյ աստուածեղբաւրն մեծի արտաճառ վարդապետութիւն. «ամենայն ասէ տուրք բարիք և ամենայն պարգևք կատարեալք ի վերուստ են իջեալ ի Հաւրէն լուսոյ», որով ուսեալ վարդապետեցաւք զի որպէս ըստ բնութեանն էակութեան պատճառ է անպատճառապէս, և սկիզբն անժամանակապէս: Ար Այն Հայր անսկզբնակից Վանին իւր Արդոյ, և անհատաբար Հոգւոյն բղխելոյ, ի նոյն պատկեր համեմատութեան՝ և յայլ տարազ իմացման իմանամք, զի ըստ ստացման և արարչութեան դարձեալ՝ նոյն համազոյ և միասնական կատարելութիւն, Արքեակն անձնաւորութիւն պատճառ է պատճառաւորապէս, յոչէից յանգոյից բոլոր էիցս ամենից, որով արժան և իրաւ պատշաճաւորութեամբ սկսմամբ յինքննէ յառաջ եկեալն էութեամբ, սկսաւ դարձեալ՝ և կարգաւորեաց աւրինազրութեամբ, զբնականսն լոկ՝ բնական կարգաւոր շարժմամբք, և զբանականսն՝ բանական բարի աւրինազրութեամբ. որով և որք առ ի նմանէ ուսեալք և սկզբնաւորեալք՝ առաջինն յաշխարհի սկզբունք և պատճառք եղեն բարեաց արժանապէս իբրու նորին ճշմարիտ բարեաց պատճառին և սկզբան պատկերք. պատուեցան և մեծարեցան, և զանմահութեան նորին աւրինակ, անմահ յիշատակաւն յերկրի յանձինս տպաւորեցին, որպէս զոչէ խաւսելով անվաղձան, իբրու միշտ կենդանի առաջին պատարագողին Աբելի արիւն, և երեւի և մնայ անըստառ պտուղ ողջախոհութեանն՝ Աոյի՝ յաշխարհ ամենայն, և ի բնութիւն մարդկային որ նորին յազգի արդարանալոյն փոխանակ դարձեալ ծաղկեցան: Ասև

հաւրն և սկզբան հաւատոցն արդարութեան, Արրահամու ուխտ և ողորմութիւն պահեցաւ մինչև ի հազար ազգ, նմանապէս և որ առաջին առ աջնորդ եղև աշխարհի զբաւոր աւրինաց և սահմանադրութեան, Մովսէս մեծն աստուած թագաւորաց կոչեցաւ, և նախապատիւ և մեծ մարգարէից հանուրց պատուեցաւ, ըստ նմին և անուանի յառաջին Աստուածապաշտ թագաւորս Աւալիթ, որ նախ ի նոցանէ պատուեաց զԱստուած սեղան կանգնելով :

Աւ և մեծ ի ծնունդս կանանց Յովհաննէս, որ նախ շնաշխարհիկ հրեշտակական սկսաւ զանապատի կեանս, և մանուանդ վասն նախկին զբարութն զաւանելոյ կրաւնքս, հիմն և փակակալ (°) թագաւորութեանն երկնից, յերանելի և ի միայն հզաւր բնութենէն երանեայն Պետրոս, առաքելոցն զլուխ արժանապէս պատուեցաւ և մեծարեցաւ. որով այսչափ նախապատվութիւն այնոցիկ որ զբարին սկզբնաւորեցին, բազմաց յորդորումն եղև և նախանձ. զանազան բարեաց պատճառ և սկիզբն լինելոյ, որպէս և ըստ որում այլք այլոց, նմանօրինակ և մերս աշխարհի և ազղի հայր լուսաւորութեան և հաւատոց ծաղեալ փայլեաց առաքելաչափ մեծ Ալուսաւորինն Ղրիզորիոս: Աւ ինորին զարմէ լուսոյ շառաւիղք ծաղեալք զանազան նշոյլք ճառագայթից, զմերս լուսափայլեալ շնորհազարդեցին զտոհմ և զեկեղեցի, որպէս յետ զովեալ որոցն նորին համանման թոռն նոցին մեծն Աերսէս, կարգաւք կրանաստանեայց և բարեգործութեամբ անանգաց, երկնի հաւասար

առաքինութեամբ զաշխարհս Հայաստանեայց նորոգեաց:

Աւ սուրբ Հայրապետն Սահակ զբաւք և թարգմանութեամբք ի զնացս զետոյց Աստուծոյ ուրախ արար զեկեղեցոյս քաղաք, յորոց վերայ իբր ի բարութք հիման շինելով, ոմանք փիլիսոփայական գետս յաւելին և այլք զմեկնութեան մտաց շաւիղ մաքրեցին. կէսք զեղանակաց երգս կարդեցին, և այլք զկանոնաց չափ սահմանեցին. յորոց յամենեցունց և յետ յորովից ի վախճան ժամանակաց և ի վերջինս գարւոյ, յանբարի և ի նուազեալ ժամանակս իբր ի զրուես ձմերայնոյ ի լընացեալ ձուռ կամ ողկոյղ ինչ զարմանալի փայլեաց և երևեցաւ ի զարմէ և ի ցեղէ ընտրութենէ մեծ լուսաւորչին համեմատ առաջնոյն երկրորդ գերամաքուրն Աերսէս, որ զհայրենին յաջորդեաց զահ և աթոռ հայրապետութեան ի Ալայն հաւաւամական, և զամենայն նորոգեաց ըստ նախնի հարցն բարեգարդութեան զառ ի զանազան թշուառութեանցն աղաւաղեալ եկեղեցոյ կարգս, որում ի նորին արեան մերձաւորութենէ, մանաւանդ յաշակերտութենէ, լուսափայլն բանի և մաքուրն վարուց յետ նորա ծաղեաց և փայլեաց նորին ձեռնաստուն եղբաւր ծննդոյ որդի, սուրբ և երջանիկ հայրն մեր Աերսէս, որ ըստ եռանդոտ բորբոքման ի սրբագործ հարազատի սէրն ըստ Ջեբեղեայ որդոյ զսիրելին ունի յատկութիւն մանկակոչութեան, զի որպէս զործատէր մեղու ի բազում ծաղկանց զբլւրապատիկ և զանազան ժողովեաց զբարեաց նախանձ յամենայն նախնեաց սրբոցն գերազարդից ըզհարցն և զհայրապետաց զձգնաւորացն և

զմիանձանց, մանաւանդ թէ առաւել լրացեալ մարգարէական և առաքելական Աստուածաբանութեամբն, և ինոյն հոգւոյ շնչմանէ զբազմաձաշակս այս խորիսն՝ որ քաղցր է քան զմեղր բերանոյ, և քան զտակի և զականս ընտիրս պատուականս երկասիրութեամբ, զործեաց և եթող մեծամեծացն հոգւով և տնանկաց ի ճշմարիտ բժշկութիւն հոգւոց, միանգամայն և ի նախանձ առաքինի զործոց, և յորդորումն և ի սէր ուսումնասիրութեան, իրբու երկրորդք ի յիսին ժամանակս ի յազգիս մերոյ սկիզբն և յորդորիչ լինելով մեկնողական իմաստից և հոգեոր այլաբանութեանց, որով բարդաւածեալ և եկեղեցի, զի վաստակով քրտնաջան հարցս փարթամացեալ, ոչինչ աղքատ գտանիմք քան զայլ եկեղեցիս որ փայլեցին նախնի մեկնողացն և հարցն սրբոց դասք: Մանաւանդ առաւել սիրելով որպէս զայլ ամենայն զիրս՝ և զտոյն հոգեշահ տառ՝ արքայս Հայոց Աւոն, և բերկրելով սովաւ պանծանօք, և զտոյն կամեցաւ ընծայ առաքել աշխարհին արեւելից, զոր և յիշատակեալն ի նախնեաց իրաւացի է, զի նախնական զարմ թագաւորիս մերոյ ի վերջին ժամանակս աւուրց Աստուածային աւրհնութեամբն ծաղկեալ զնափանեալ ի վաղուց թագաւորութիւնն Հայոց նորոզեցին, և զտարբերեալ ազգս ծառայութեամբ և զերութեամբ ի սարկութիւն այլասեռից՝ զատեալ և ժողովեալ հանդուցին և բնակեցուցին ընդարձակապէս իշխանութեամբ, ի ժամանակս յորով աշխարհաց աւերմանց և մեծամեծ թագաւորութեանց կործանման հաւասարեալք Վոյն նահապետութեանն՝ որ ի ջնջն

աշխարհի նշխար ամման և արծարծելոյ մնաց բնութեանս մերոյ, որ և սոքին իսկ հարք և հաւք արքայիս մերոյ Աւոնի, ըստ հաւաստի ազգաբանութեան յերկուց նախնախոր ցեղապետութեանց խառնեալ ի հայկազանցն քաջաց և Արրահամեան աստուածապաշտ բեղմնաւորութենէն ի Վեռուրական ծննդոց, նաև յիսոյ Արշակունի թագաւորութեանն զարմ, և Պալհաւիկ ցեղն հայրապետական որ ի Աուսաւորչէն մերմէ, միաւորեալ Վրիստոսիւ ի մի, զբարեպտուղ արքայս մեր ծաղկեցուցին, զի ըստ Հեթմեանցն տնուանեաց, եկն ի սա՝ ցեղն Պալհաւիկ, և մերձաւորութիւն արեան Հայրապետական տոհմին, և ըստ Ռուբինեանց յաղթագաց՝ խառնեցաւ ցեղն Արշակունի և Հայկազն ի տոհմն թագաւորական: Վանգի քաջ և արի իշխանն Ռուբէն նախնին սոցայ, ազգական զորով մեծի թագաւորին Հայոց Վաղկայ, զիմեալ յարեւելից, եկն ի սահմանս Տաւրոսի ի զահ Ալիկեցուց, և բացեալ և ընդարձակեալ՝ տիրեաց կողմանցն այնոցիկ, և յեա նորա տիրէ որդի նորա Աոստանդին, և ապա քաջն և բարին Թորոս մեծ որդին Աոստանդեայ, որ առաւել ընդարձակեաց զիշխանութիւն տէրութեանն:

Յետ Թորոսի տիրէ Աւոն որդովքն, յետ Աւոնի որդի նորին Թորոս երկրորդ: Ապա յետ Թորոսի տիրեաց իշխանն Ստեփանէ, և յետ Ստեփանէի տիրեաց Արշէհն, և յետ Արշէհնի տիրեաց իշխանն Ռուբէն որդին Ստեփանէի, և յետ Ռուբէնի բարեշնորհն և բարենշանն Աւոն միւս որդին Ստեփանէի և եղբայրն Ռուբէնի՝ տիրեաց մեծայաղթութեամբ, որ

ընդ բազումս նուաճեաց ազգս և աշխարհս  
 դմերս ընդարձակելով . և ըստ նախնի պը-  
 սակաւորացն մերոց Հրաչէին և Պարոյրի,  
 կամաւք քաղցրութեանն Աստուծոյ բարձ-  
 րացեալ յերկուց կայսերացն ընկալ-  
 եալ թաղ նորոգեաց զխափանեալ աթոռ  
 և արքունիս թագաւորութեան մերոյ .  
 յորմէ ծնեալ ամենագով թագուհին Չա-  
 սիլ, այն որ զուգեալ յամենանութիւն  
 բարի թագաւորին Հեթմոյ՝ ճնաւ զյաղ-  
 թաւը թագաւորս մեր Աւետն, որ թէպէտ  
 ըստ աւերինակին Տեառն իբրու քաջ հո-  
 վիւ եղ զանձն ի վերայ ոչխարաց և եկե-  
 ղեցւոյ, և մասնեցաւ ընդ եղբաւրն իւրում  
 Թորոսի ի մահ և ի զերութիւնս, սակայն  
 շնորհն Աստուծոյ իբրև զսիրեցեալ անդ-  
 րանիկ որդին զխրաչայէլ վերստին յերկաթի  
 հնոցէն և ի հայրցէն յԱզիպտոսէ պարգե-  
 եալ մեղ շնորհեաց, որ թագաւորեալ տի-  
 բէ մեղ իմաստութեամբ և բարեպաշտու-  
 թեամբ, իբրու վեմ՝ անդամանդ և անշար-  
 ժկի բազմագոյն հնարիւք իմաստից, և  
 աշխատութեամբ ճանապարհաց և պա-  
 տերազմաց և ծախիւք զոյից, պարսպէ  
 զմեղ շուքանակի ի մրրկեալ այեացն  
 անաստուած հեթմանոսացն խռովութենէ:  
 Երդ սոյն ամենաբարի և Պայազատ  
 թագաւորս մեր Աւետն, ի վերայ յորունց  
 բարեաց տեսակաց և բարեսիրութեանց  
 որպէս Վաւիթ մեծն՝ որ քան զամենայն  
 փառան թագաւորական՝ երանելի համա-  
 րէր զվայելչութիւն տանն Աստուծոյ սի-  
 բել և տեսանել, նոյնաւերինակ և սս սի-  
 բելով զսրբոյ Ազիկեցւոյ պայծառութիւն՝  
 և զվայելչական կարգս եկեղեցականս տա-  
 տանայր ի բազում վանաւրայս և յեկե-  
 ղեցիս, ընդ զպէտս սրասաւորաց առա-

տաճիր պարգեաւք ուժկաց, միանգամայն  
 և վայելչացուցանէր փարթսմութեամբ  
 զտունս Աստուծոյ պէս պէս զգեստուք և  
 անաւթաւք պատուականաւք և բազում  
 կտակարանաւք հին և նոր պատուիրա-  
 նաց, նաև պէսպէս մեկնութեամբ նոցին՝  
 զոր հարքն երջանիկք ի ձեռն Հոգւոյն  
 սրբոյ պարգեալ բացայայտեցին, և մանա-  
 ւանդ առաւել աննշմամբ սրտի սիրելով  
 զհայրնի և պարծելի բնիկ Հայկազանց  
 աշխարհս զտունն արեւելց՝ որ առաջին է  
 մասն և զլուխ աւերինակ իմն բոլոր աշ-  
 խարհի, զի անտի սկսանին ի ձեռն լուսա-  
 ւորացն՝ աշխարհի շարժմունք և կամ թէ  
 կոչել զնոյն աշխարհի իրաւ հայր և հաւ-  
 մարդիութեանս՝ յորում զազարեալ տա-  
 պանն Աոյի և բացեալ անտի դարձեալ  
 սերեցաւ մարդկային դարմ, յորմէ ի նոյն  
 արեւելեան կողմանէ որպէս զգալի լոյս ա-  
 բեռն տիեզերաց ծագէ, այսպէս և զհո-  
 գեոր լոյս աւետարանին փառաց անտի  
 ծագեալ ընկալաք ի մեծ Առուսաւորչէն  
 մերմէ Պրիգորէ, որով թէպէտ այսր և  
 անդր վտարեալ հեռացաք ի նմանէ իբ-  
 րև Հրէիցն ազգ յԱրուսաղէմէ զերու-  
 թեամբ, սակայն զՎաւթին զոչէ ամենից  
 մեր սիրտս թէ «մոռացայց զքեզ Արուսա-  
 ղէմ՝ մոռացի զիս աջ իմ» . զոր ճշմար-  
 տապէս քան զբազումս առաւել սիրելով  
 և անմոռաց բազմանաւք միշտ ի մտի ու-  
 նելով արքայս Աւետն, զվանաւրայս և  
 զեկեղեցիս և զբարեձև կրաւնաւորս, և  
 զկարգս արեւելեան կողմանցն որ ի Մեծ  
 Հայք, որով հանապազ պարծէր առ ա-  
 մենայն ազգս և լեզուս Պրիստոնից, և  
 միշտ զովեր և տննէր իբրու հարազատ  
 ժառանգ, և մանաւանդ քան զբազում

անդիս զմեծ և զհոչակաւոր երկնահաւա-  
սար սուրբ ուխտան զմայրավանքն զհաղ-  
բատ, յորում կամեր անմոռաց արձանա-  
ցուցանել զինքեանն յիշատակ բարի ի  
Քրիստոս նուիրաւք և պատարագաւք,  
վասն որոյ և ընդ այլոց թագաւորական  
ընձայից, զոր միշտ առաքէր, և զգիրքս  
զայս մեկնութեան Սաղմոսաց Վաւթի որ  
ի նախասացեալ սուրբ հաւրէն Աերսէսէ  
յազգայնոյ արքայիս մերոյ յարմարեալ՝  
անասնկով զի չգոյր և զեռ չէր բնաւ ու-  
րիք տարածեալ յաշխարհն Արեւիցի,  
սա սկիզբն և պատճառ լինելով բարեաց՝  
նորոզընձայ առաքեալ՝ պարզեաց սուրբ  
ուխտին հաղբատայ ի վայելումն մանկանց  
նորա, և յիշատակ ինքեան անմոռաց և  
ամենայն աշխարհին և վանաւրելիցն արե-  
ւելից յաւրինակ զազաւորի և պատճառ  
տարածման ի բողոքսն:

Վասն որոյ ազաչեմք զամենեանն որք  
կարողայք և վայելէք և կամ լսէք և շա-  
հիք աւգտութեամբ, դարձեալ և որք աւ-  
րինակէք և գրէք, մանաւանդ թէ սոյն  
բարեկոյս Արքայս աղաչէ թախանձանաւք և  
ժտէ զսրբազնամաքրութիւնն ձեր, յիշել  
զսոյն բազմաքիրտն զաշխատեալ ի վերայ  
ազգիս մերոյ զթագաւորս Վեոն, որ մնաց  
զաւակ արձանադրութեան հայկազանց  
տոհմիս: Զոր թէ ոչ Տեառն զօրութեանց  
թողեալ էր մեզ զաւակ՝ իբրև զՍողոմ  
լինէաք և Գոմորայ նմանէաք: Աս և դրա-  
բեհոգի նախնիսն զազգն Ռուբինեանց և  
զհեթմանց, և զմեծ արքայն զսոռաջին  
պսակաւորն զթագաւորն Վեոն, և զա-  
մենապարկեշտ և զառաքինի զուստր նո-  
րին, զմարդասէրն և զՔրիստոսասէրն  
զթագուհին Զասպէլ զմայր արքայիս: Աւս

և զերանելի հայր սորա զբարի թագաւորն  
հեթում, զգովեալն և զհոչակեալն յա-  
մենայն ազգաց և ի հանուրց բերանոց,  
որ ընդ ամենայն բարեաց և աստուածսի-  
րութեանց յաւել և զայս, զի յորժամ  
ել ի վերայ աշխարհի զերբիչ և աներիչ  
հեղեղ զաւրացն որ Մուղալ կոչի, սա ի  
սկիզբն վաղվազակի ընդ մեջ բազմութեան  
ազգացն Թուրքաց, և երկայնաձիգ հե-  
ռաւորութեան ճանապարհի և աշխար-  
հաց ծառայական և ստրուկ գձձութեամբ  
զսոռաջինն այլակերպեալ ընդ զեկանաց  
իւրոց եհասս առ խանն մեծ, և զհաշտու-  
թիւն և զխաղաղութիւն աշխարհին և  
ազգի մերոյ հնարեցաւ, որպէս Տէրն որ  
զճառայի առեալ կերպարան, և խոնարհ-  
եալ յանձառ Աստուածութեանն փա-  
ռաց, արար զմեր փրկութիւնն: Արով ի-  
մաստութեամբ նորին թագաւորին յոր-  
ժամ աշխարհ ամենայն և մեծամեծ թա-  
գաւորութիւնք ի սուր սուսերի մաշեցան,  
մեր փոքրադոյն զաւառս և ազգ անվնաս  
ազրեցաւ, և յաւիտեան առ նոսին հա-  
ւատարիմ պատուեցաւ, որով արժա-  
նապէս յիշեալ լիցի ի Քրիստոս:

Յիշեցէք և զթագաւորահայրն զճնաւդ  
նորին արքային հեթմոյ՝ զպարոն Առստան-  
դին, արեամբ նահատակեալ որդովք իւ-  
րովք ի Տէր, և մանաւանդ զորդի թագա-  
ւորին՝ զպարոն Թորոս, զկրտսեր եղբայր  
արքայիս մերոյ, որ ընդդէմ գինեալ Ա-  
ղկատացի Մահմետական զաւրացն վասն  
Քրիստոսական կրաւնիցն և եկեղեցւոյ  
սրբոյ և ազգիս մերոյ արեամբ նահատակե-  
ցաւ: Յիշեցէք և զամենաբարեգործ և ըզ-  
Քրիստոսասէր զշխոյ արքայիս մերոյ  
զաւրհնեալն ի կանայս զթագուհին զԱլ-

բաննայ՝ որ մայրաբար խնամաւք զբոլոր եկեղեցւոյ որդիս յանձանձէր, և զհայրական այցառնութիւն ամենայն աղքատաց յառատաձիր տուրս զուարթամիտ ոգորմածութեամբ ընդր. իբրու զնորատունի ձիթենի, ծաղկիալ լուսաւոր գործովք և բարեբոյս ճնընդովք, կատարեալ ի սահաւուն զերկայն ժամանակաց վաստակ և զարդիւնս ելլից, և յայտմ ամի փոխեցաւ առ Վրիստոս, յորժամ արքայ նորին տէրս մեր ճանապարհորդեալ էր յարեւերս ի դուռն խանին Երզրունի: Յիշեցէք և զբարի յիշատակն սոցին զարքայիս մեր և զհանուրց, և զղշխոյն բարի, զթագաժառանգն բարեմիտ, և զշնորհալի և զամենիմաստ անդրանիկն զպարոն Հիթում զղուարթագէմն և զղուարթաբարոյն, որ փոխանակորդն է և զաւագան մերոյս արքայի թագաւորութեանն: Աւ զառաքինի եղբայր նորին զպարոն Թորոս, որ հաւասարի ի մանկական տիւ ողջախոհութեանն Յովսէփայ, նոյնպէս և զայլ ևս զեղբարս սոցին զորդիս թագաւորիս մերոյ Աւոնի, զԱմբաս, զԱոստանդին զնուիրեալն Եստուծոյ զԱերսէս, զԵւչին, զՍուբէն հանգերձ քերքն իւրեանց: Ասե բոլոր զարմք և տոհմք թագաւորիս մերոյ յիշեալք լեցին շնորհացն և ողորմութեանն Եստուծոյ: Աւ առաւել աղաչեմք զձեզ կրկին և պաղատիմք սիրովն ի մեղսաքաւիչ խորհուրդ պատարաղիւոյն Վրիստոսի, և յամենայն քահանայական նուիրաղործութիւնս տէրունական տաւնից, և ի հանապազորդ աղաւթս միաբանականս և յառանձնականս ժտել յԵստուծոյ, զի պարգևեցէ արքայիս մերոյ Աւոնի և իւրոյն յետ երկայն և խաղաղական կենաց յաղ-

թութեամբ և բարեպաշտութեամբ թագաւորելոյ յաստիս, ժառանգել զանանց թագաւորութիւնն՝ զաանելով ներումն և թողութիւն յանցանաց, և արձակել յերկինս և յերկրի ձերով միջնորդութեամբ ի կապից մեզաց, յառնել ընդ արդարս և զասիլ յաջակողմեան զասուն, և ժառանգել զյաւիտենական կեանսն ի Վրիստոս ի Տէր մեր:

Վարձեալ աղաչեմք զաւրինակողսս տի, զի զբեաջէք և զյիշատակս արքայիս ի Վրիստոս:

**ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ**

ՄՆԵՅՈՒՆ ԳԱՋԵՐԻ ՀԵՂՈՒԿԱՆԱՆ

ՋՐԱԾԻՆԻ ՊՆԳԱՆԱՆ

(Պ. Ուսուցիչ Գեղեցիկ և Պ. Աստուծոյ Բարեբախտութիւնը:)

Բնութեան ամեն մարմիններն երեք վիճակ կուենենան՝ հաստատուն՝ կամ հեղուկ եւ կամ գազային, եւ ամենքն եւս կարող են իւրեանց վիճակները փոխել, այս ինքն հաստատունէն հեղուկ եւ ասկէ գազ դառնալ: Այս տեսակ փոփոխութիւնները կարատճառին բարձր կամ ստորին աստիճանի բարեխառնութենէ եւ մարմինին վերայ ներգործող ճնշողութեան սաստկութենէն: Այս վիճակափոխութեան ամենապարզ օրինակն է ջուրը, որ միջակ բարեխառնութեան մէջ հեղուկ վիճակ ունի: